

ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՇՏԱՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՆԴԵՍ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Ապրիլի 2-ին, հինգշաբթի օր, ժամը 3-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ 1961—1962 ուսումնական տարվա շրջանավարտներ բարեշնորհ Զոհրապ սարկավագ Շամլյանի և բարեշնորհ Կարպիս սարկավագ Սարայդարյանի դիպլոմային աշխատանքների պաշտպանությունը և վկայականների բաշխման հանդիսությունը։

Ըստ Հոգևոր Ճեմարանի ծրագրի, այն ուսանողները, որոնք հաջողությամբ հանձնում են իրենց ավարտական քննությունները, ներկայացնում են նաև Հոգևոր Ճեմարանի վերատեսչության կողմից հանձնարարված աստվածաբանական, եկեղեցա-պատմական, մատենագիտական որևէ թեմայի շուրջ գրված դիպլոմային աշխատանք, 40—50 մեքենագրված էջերի ծավալով։

1961—1962 թվականի շրջանավարտ սարկավագներից երկուսը ներկայացրել էին իրենց դիպլոմային աշխատանքները։

Զոհրապ սարկավագի նյութն էր «Հայ երաժիշտ վարդապետները Ե—ԺԵ դար», իսկ Կարպիս սարկավագի թեման էր «Ս. Գրիգոր Նարեկացու մատենագրական վաստակը։

Վերատեսչի նախագահության տակ կազմված քննիչ հանձնաժողովը, ծանոթանալուց հետո ներկայացված դիպլոմային աշխատանքներին, ապրիլի 2-ին նշանակում է դիպլոմների հրապարակային պաշտպանություն։

Վերատեսչի գլխավորությամբ քննիչ հանձնաժողովը (գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյան, Արթուն Հատիտյան, Պարգև Շահբազյան) վարում է նաև դիպլոմների կանոնավոր պաշտպանությունը։

Երկու շրջանավարտ սարկավագները փայլուն հաջողությամբ պաշտպանում են իրենց դիպլոմային աշխատանքները, պատասխանելով մի շարք հարցերի։

Վերջում քննիչ հանձնաժողովի դիտողություններն ու գնահատականները հրատարակում է վերատեսուչ սրբազանը, խնդրելով Վեհափառ Հայրապետի օրհնությունները Հոգևոր Ճեմարանի և նոր շրջանավարտների վրա։

Այնուհետև շրջանավարտները աջահամբույրով Վեհափառ Հայրապետից ստանում են իրենց վկայականները, ներկաների բուռն ծափերի ներքո։